ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/215

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12912-2020 գրությամբ «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 25.08.2020թ. թիվ 01/61-15765-20 գրության հիման վրա 27.08.2020թ. թիվ 26/26-1/12912-2020 գրությամբ նախաձեռնել է «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/215 ընթացակարգի շրջանակներում 10.09.2020թ. ժամը 10:05-ին և 17.09.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.08.2020թ. թիվ 04.1/31.2/20936-20 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 22.07.2020 թվականին հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/95 ծածկագրով Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի թենիսի դաշտի կառուցման աշխատանքների գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 04.08.2020 թվականին, Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը, միաժամանակ հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/215 ընթացակարգի շրջանակներում 10.09.2020թ. ժամը 10:05-ին և 17.09.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստը.

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>22.07.2020թ.:</u>***

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12912-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.08.2020թ. թիվ 04.1/31.2/20936-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու

համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>22.07.2020թ.:</u>***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 04.08.2020թ. Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որոնք վերջինիս կողմից չեն ներկայացվել:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված ու տեղեկագրում հրապարակված գնումների պլանների վերաբերյալ տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում ***<u>13.07.2020թ.</u>*** հրապարակվել է 2020 թվականի փոփոխված գնումների պլան, մինչդեռ արձանագրում եմ, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկան ներառված չէ վերը նշված գնումների պլանում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/95» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.

N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12912-2020 գրությամբ «Էլեկտրոնիկ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**